ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060285012 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » հունվարի 2018 թվական N 01-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ / ԳՐԱՖԻԿԸ / ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով. *որոշում եմ՝*

1. Հաստատել Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի հերթական արձակուրդների ժամանակացույցը / գրաֆիկը / :
2. Արձակուրդները տրամադրել ըստ ժամանակացույցի , համաձայն հավելվածի :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2018թ.հունվարի 11
գ. Մայակովսկի

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված Մայակովսկի համայնքի
ղեկավարի 2018թ-ի հունվարի 11-ի N 01-Ա որոշման

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ /2018թ./

/հ	ԱԱՀ	Պաշտոնը	Աշխատանքի ընդունման տարին(ըստ պայմանագրի)	Օգտագործվող ժամանակահատվածը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	Բարսեղյան Վահագն	Համայնքի ղեկավար	02.10.2016թ.	2018թ.					■							
2	Մարտիրոսյան Բաբկեն	Համայնքի ղեկավարի տեղակալ	02.10.2016թ.	2018թ.						■						
3	Փայտյան Վեներա	Աշխատակազմի քարտուղար	24.01.2007թ.	2018թ.		■										
4	Հարությունյան Աստղիկ	Առաջատար մասնագետ	24.01.2007թ.	2018թ		■										
5.	Միսակյան Գոհար	Առաջատար մասնագետ	27.02.2015թ.	2018թ.					■							
6.	Ասատրյան Գեղամ	Առաջին կարգի մասնագետ	24.01.2007թ.	2018թ.							■					
7.	Ազատյան Արուս	Երկրորդ կարգի մասնագետ	24.01.2007թ.	2018թ.				■								
8.	Մկրտչյան Վերժինե	Երկրորդ կարգի մասնագետ	22.07.2010թ.	2018թ.				■								
9.	Աթոյան Մհեր	Վարորդ	30.06.2017թ.	2018թ.					■							
10.	Հարությունյան Անուշ	Գյուղապետարաի հավաքարար	20.05.2010թ.	2018թ.							■					
11.	Շահինյան Գագիկ	Գերեզմանատան աշխատող	01.02.2010թ.	2018թ.									■			
12.	Հարությունյան Հայկուհի	Գյուղապ. պահակ	18.07.2017թ.	2018թ.								■				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11» հունվարի 2018թվական N 02 -Ա

ԳՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գնումների մասին,, Հայաստաանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետով, ***որոշում եմ***՝

1.Մայակովսկի համայնքապետարանի 2018 թվականի ընթացքում աշխատանքների կատարման, ծառայությունների կամ ապրանքների ձեռքբերման համար սահմանել

1) պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ անհատական կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հարությունյան Աստղիկ - աշխատակազմի առաջատար մասնագետ ,

հանձնաժողովի անդամներ՝

Ասատրյան Գեղամ - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ,

Մկրտչյան Վերժինե - աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ:

2) գնումների համակարգող՝ առաջատար մասնագետ Գոհար Միսակյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հունվարի11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունվարի 2018թվական N 03-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 16-րդ կետով, ***որոշում եմ***՝

1. Հաստատել Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հունվարի15

Հաստատում եմ՝

Մայակովսկի համայնքի ղեկավար

15.01.2018թ Վ. Բարսեղյան

Պատվիրատու՝ Մայակովսկի համայնքապետարան

Անվանումը՝ 2018թ գնումների պլան

Ֆինանսավորման աղբյուրը՝ Մայակովսկի համայնքի 2018թ բյուջե

Ծրագիրը՝ Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում

Գնման առարկայի						
Միջանցիկ կոդը ըստ CPV դասակարգման	Անվանումը	Գնման ձևը/ընթացակարգը	Չափման միավորը	Միավորի գինը	Ընդամենը Ծախսերը դրամ	Քանակը
1	2	3	4	5	6	7
Բաժին 01 խումբ 01 դաս 01						
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ					
	1.Ապրանքներ					
	1.1Գրասենյակային նյութեր և ապրանքներ				420000	
30197632	Թուղթ գրելու A4չափի	ՄԱ	տուփ	2000	80000	40
30197234	Թղթապանակ ռեգիստր	ՄԱ	հատ	1000	10000	10
39263200	Գրասենյակային գիրք և բլանկներ	ՄԱ	հատ	400	32000	80
30192730	Լամինացիայի թաղանթ	ՄԱ	տուփ	1000	10000	10
30141200	Մեղանի հաշվիչ	ՄԱ	հատ	5000	25000	5
30192122	Գրիչ	ՄԱ	հատ	100	15000	150
30192128	Գրիչ գելային	ՄԱ	հատ	300	3000	10
30192131	Մատիտ	ՄԱ	հատ	100	6000	60
30194810	Քանոն	ՄԱ	հատ	100	2000	20
30192710	Սոսինձ	ՄԱ	հատ	200	4000	20
30192160	Շտրիխ	ՄԱ	հատ	300	6000	20
30197220	Ամրակ	ՄԱ	հատ	400	12000	30
30197330	Դակիչ	ՄԱ	հատ	2500	15000	6
30197324	Կարիչ	ՄԱ	հատ	2500	15000	6
30197111	Կարիչի մետաղալարե կապեր	ՄԱ	հատ	700	21000	30
30192114	Թանաք կնիքի կապույտ	ՄԱ	հատ	700	10500	15
30234620	Կրիչ 4գբ	ՄԱ	հատ	3600	18000	5
35821000	Դրոշներ	ՄԱ	հատ	10000	20000	2

32552100	Հեռախոսներ	ՄԱ	հատ	7000	14000	2
30197232	Թղթապանակ արագակար	ՄԱ	հատ	200	10000	50
22816300	Նշումների կպչուն թղթիկներ	ՄԱ	հատ	300	6000	20
30121450	Պրինթերի քարթրիջներ	ՄԱ	հատ	30000	60000	2
30197230	Թղթապանակ կոճակով	ՄԱ	հատ	200	6000	30
30197234	Թղթապանակ կոշտ կազմով	ՄԱ	Հատ	600	12000	20
30192720	Գծանիշ/ մարկեր/	ՄԱ	Հատ	300	3000	10
30192111	Բարձիկ կնիքի	ՄԱ	հատ	500	4500	9
	1.2 Կենցաղային ծառայություններ	ՄԱ			1060000	
98391210	Հատուկ նպատակային այլ նյութեր	ՄԱ	դրամ		800000	
39220000	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	ՄԱ	դրամ		260000	
	1.3 Տրանսպորտային նյութեր, այդ թվում	ՄԱ			1800000	
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր		300000	
09211120	Շարժիչի յուղ	ՄԱ	լիտր		100000	
09120000	Սեղմված գազ	ԳՀ	խմ		1300000	
34000000	Տրանսպորտային սարքավորումներ	ՄԱ	դրամ		100000	
30200000	1.4 Վարչական սարքավորումներ,	ՄԱ	դրամ		55600	
44621160	1.5 Այլ մեքենաներ և սարքավորումներ	ՄԱ	դրամ			
	2.ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ					
09311100	Էլեկտրոէներգիայի բաշխում	ՄԱ	դրամ		1600000	
65200000	Գազի բաշխում և դրա հետ կապված ծառայություններ	ՄԱ	դրամ		500000	
	Կապի ծառայություններ,այտ թվում	ՄԱ			950000	
64111200	Փոստային ծառայություններ	ՄԱ	դրամ		60000	
64211000	Հանրային հեռախոս	ՄԱ	դրամ		60000	1
64212000	Բջջային հեռախոս	ՄԱ	դրամ		120000	1
32411140	Համացանցային ծառայություններ	ՄԱ	դրամ		710000	
	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ				50000	
66514100	Ծառայողական ավտոմեքենայի ապահովագրություն	ՄԱ	դրամ		50000	1
98390000	Ը նդհանուր բնույթի այլ ծառայություններ միջոցառում	ՄԱ	դրամ		540000	
80500000	Ներքին գործուղումներ	ՄԱ	դրամ		30000	

79631300	Մասնագիտական ծառայություններ	ՄԱ	դրամ		30000	
98341140	Շենքերի պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ		200000	
34111000	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	ՄԱ	դրամ		480000	
98390000	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	ՄԱ	դրամ		22000	
	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
45000000	Համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում	ԳՀ	դրամ			
Բաժին 01	Խումբ 03	Դաս 03				
98390000	Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	ՄԱ	դրամ		230000	
66110000	Բանկային ծառայություն	ՄԱ	դրամ		65000	1
48920000	Հողի հարկի գույքահարկի բազայի սպասարկում	ՄԱ	դրամ		165000	1
75100000	Կառավարչական ծառայություններ	ՄԱ	դրամ		300000	
79212300	Աուդիտ	ՄԱ	դրամ		300000	1
Բաժին 02	Խումբ 02	Դաս 01				
	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ					
	Ծառայություններ					
75222000	Քաղաքացիական պաշտպանության ծառայություն	ՄԱ	դրամ		200000	1
Բաժին 03	Խումբ 02	Դաս 01				
	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ					
	Ծառայություններ					
75252000	Փրկարարական ծառայություններ	ՄԱ	դրամ		150000	1
Բաժին 04	Խումբ 02	Դաս 01				
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	ՄԱ			60000	1
Բաժին 04	Խումբ 05	Դաս 01				
	Աշխատանք					
45231177	Մայակովսկի համայնքի համայնքային ենթակայության ճանապարհների փոսային վերանորոգում և կապիտալ նորոգում	ԳՀ	դրամ		2000000	
	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ				2220000	
Բաժին 05	Խումբ 01	Դաս 01				
	Աղբահանում	ՄԱ	դրամ		2100000	
90700000	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	ՄԱ	դրամ		120000	
	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ				1060000	

Բաշին 08	Խումբ 02	Դաս 04				
	2.Ծառայություններ					
79951100	Այլ միջոցառումների կազմակերպում	ՄԱ	դրամ		710000	
92522200	Պատմական շինությունների պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ		150000	
48810000	Տեղեկատվության ձեռքբերում	ՄԱ	դրամ		200000	
92410000	Թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն	ՄԱ	դրամ			
	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ				1986000	
Բաժին 09	Խումբ 02	Դաս 02				
	Միջնակարգ ընդհ. կրթություն	ՄԱ	դրամ		960000	
	Նախդպրոցական կրթություն	ՄԱ	դրամ		876000	
	Բարձրագույն մասնագիտական կրթություն	ՄԱ	դրամ		150000	

Գնումների համակարգող՝ Գ. ՄԻՍԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2018 թվական N 04-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Անժելա Գասպարյանի և Արմեն Հարությունյանի դիմումները օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, հաշվի առնելով նրանց ընտանիքի սոցիալական վիճակը. ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.

Անժելա Գասպարյանին - 50 000 / հիսուն հազար/ դրամ ,
Արմեն Հարությունյանին - 50 000 / հիսուն հազար/ դրամ,
Ընդամենը 100 000 / հարյուր հազար/ դրամ :

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հունվարի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2018թվական N 05-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետի պահանջով, որոշում եմ.

1. Հաստատել Մայակովսկի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը, համաձայն հավելվածի:
2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Բաբկեն Մարտիրոսյանի վրա:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.հունվարի25

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի
2018 թվականի հունվարի 25-ի
N 05-Ա որոշման

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մայակովսկի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2018 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի» պահանջներին համապատասխան:Ծրագիրը համահունչ է երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների պետական քաղաքականությանը և երեխայի իրավունքների պաշտպանության 2018 թվականի տարեկան պետական ծրագրին:

II. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Ծրագրի նպատակն է՝ Մայակովսկի համայնքում բարելավել երեխաների բնականոն զարգացումը, նպաստել ազգային և համամարդկային արժեքներ կրող անձի ներդաշնակ ձևավորմանը:

4. Ծրագրի հիմնական խնդիրն է ապահովել՝

1) երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը,

2) ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը,

3) կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

4.Ծրագրի նպատակին հասանելիության ապահովմանն ուղղված գործառույթն է՝

1) Բացահայտել՝

ա.առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ.ծնողների, ծնողականխնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքեր,

գ.համայնքում երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացածության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը,

դ.կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին:

2)Իրականացնել Հայաստանի Հանրաապետության օրենսդրությամբ Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում վերապահված հետևյալ գործառույթները՝

ա. սկզբնական հաշվառման վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին,

բ. անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը,

գ. այլ գործառույթներ:

5.Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2018 թվականին նախատեսվող միջոցառումները՝

1)երեխաների իրավունքների պաշտպանության թեմայով կազմակերպել հանձնաժողովի

ընդլայնված նիստ՝ շահագրգիռ անձանց մասնակցությամբ,

2)թափառակաշրջիկությամբ, մուրացկանությամբ զբաղվող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների հայտնաբերման նպատակով ոստիկանության բաժնի հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր,

3)մշակութային և ուսուցողական միջոցառումների միջոցով նպաստել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, մասնավորապես՝ սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած և հակասոցիալական վարք դրեսևորող (իրավախախտում կատարած) երեխաների աշխարհայացքի ձևավորմանը ու զարգացմանը, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակությանը, ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետը
1.	Համագործակցություն Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ	Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետ համագործության աստիճանի բարձրացում	տարվա ընթացքում
2.	2018 թ. մայիսին Մայակովսկու Սուրբ Հովհաննես եկեղեցում ամենամյա կազմակերպվող հոգևոր-մշակութային միջոցառմանը ապահովել համայնքի սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ներկայությունը	Երեխաների հոգևոր-մշակութային դաստիարակության բարձրացում	մայիս
3.	Ընտանիքի միջազգային օրվան նվիրված կլոր սեղան	Երեխաների և ընտանիքների հիմնախնդիրների քննարկում	մայիսի 15
4.	2018 թ. հունիսի 1-ին գրադարանում կազմակերպել մշակութային-երաժշտական միջոցառում՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան	Երեխաների հայրենասիրական և գեղագիտական դաստիարակության բարձրացում	հունիսի 1
5.	Կատարել տնայց՝ խնամակալություն և հոգաբարձություն սահմանված ընտանիքներ (կատարել տնայցեր նաև ըստ անհրաժեշտության)	Հանձնաժողովի կողմից խնամակալություն և հոգաբարձություն սահմանված ընտանիքներում երեխաների խնամքի, պահելու, կրթական հարցերի վերահսկողություն, խնդիրների հայտնաբերում և լուծում	տարվա ընթացքում

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Փայտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2018 թվական N 06-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով , ***որոշում եմ.***

1. Մայակովսկի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-043-128-0147 կադաստրային ծածկագրով 8.4 հա հողամասին տրամադրել հասցե՝

գյուղ Մայակովսկի, 1-ին փողոց , թիվ 2/20-2 հասցե :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.հունվարի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունվարի 2018 թվական N 07-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով , ***որոշում եմ.***

1. Յուղաբեր Ռաֆիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող բնակելի տանը և 0.022589 հա տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝

գյուղ Մայակովսկի, 2-րդ փողոց ,թիվ 4/1 հասցե :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.հունվարի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29 >> հունվարի 2018թվական N 08 -Ա

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Յուղաբեր Ռաֆիկի Պետրոսյանի դիմումը , որով նա ցանկություն է հայտնել օրինակեցնել սեփականության իրավունքով իրեն պատկանող 2-րդ փողոց, թիվ 4/1 հասցեի տնամերձ հողամասում գտնվող շինությունները :

Համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ քաղաքացի Յուղաբեր Ռաֆիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2-րդ փողոց, թիվ 4/1 հասցեի տնամերձ հողամասում 1964թվականին կառուցվել է՝
1) բնակելի տուն S=37.65 քմ,2)նկուղ S=31.22 քմ,3) ավտոտնակ S=22.69 քմ,4)խորդանոցS=6.63 քմ :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացի Յուղաբեր Ռաֆիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2-րդ փողոց, թիվ 4/1 հասցեի տնամերձ հողամասում գտնվող շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը , շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն հակասում քաղաքաշինական նորմերին՝

որոշում եմ՝

1. Քաղաքացի Յուղաբեր Ռաֆիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2-րդ փողոց, թիվ 4/1 հասցեի տնամերձ հողամասում կառուցված .
1) բնակելի տուն S=37.65 քմ,2)նկուղ S=31.22 քմ,3) ավտոտնակ S=22.69 քմ,4)խորդանոց S=6.63 քմ մակերեսներով շինությունները համարել օրինական :

2.Հաշվի առնելով այն հանգամանքը , որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը , այդ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կոտայքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Յուղաբեր Ռաֆիկի Պետրոսյանին սեփականության իրավունքը՝ նշված ինքնակամ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հունվարի29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<29>> հունվարի 2018 թվական N 09-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐԶԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի գյուղապետարան է դիմել բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող համայնքի բնակիչ Լենա Աշոտի Եղիազարյանը, որը սովորում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման երրորդ կուրսում հայտնելով, որ չի կարողանում վճարել ուսման վարձը , ուստի խնդրում է դրամական օգնություն , վարձը փոխանցելու համար :

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով . ***որոշում եմ՝***

1. Կատարել փոխանցում Լենա Աշոտի Եղիազարյանի անունով 50 000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ՝ <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ>> ՓԲԸ , 220003320227000 հաշվի համարին :
2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆ

2018թ.հունվարի 29
Գ. Մայակովսկի